Azg
Azg armenian daily
13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1994, ՀԻՆԳՇԱԲԹԻ # 196 (699)

ԱՄՆ Կոնգրեսը հետաձգեց «մարդասիրական միջանցքի» օրինագծի քննարկումը

ԱՄՆ Կոնգրեսը հոկտեմբերի 8-ին ավարտեց իր հերթական նստաշրջանը, այդպես էլ չքննարկելով «մարդասիրական միջանցքի» օրինագիծը, երեկ հայտնեցին Հայ-ամերիկյան մամլո կենտրոնում: Ինչպես հայտնի է, 13 սենատորի եւ 105 կոնգրեսականի հրամանությունն ստացած օրինագիծը նախատեսում է արգելել ֆինանսական օգնության հատկացումն այն երկրներին, որոնք շրջափակում են ԱՄՆ-ի մարդասիրական օգնությունը մեկ ուրիշ պետության: Որպես օրինակ նշվում է Թուրքիան, որը շրջափակում է իր սարածքով Հայաստանի համար ամեն տեսակ բեռների փոխադրումը: Կոնգրեսական Լեմանը, որ այս տարվա մարտին հեղինակել էր այդ օրինագիծը, ընդգծեց դրա բարոյական մեծ նշանակությունը: «Իմաստ չեմ տեսնում, որ ԱՄՆ-ն օժանդակություն տրամադրի այն երկրներին, որոնք խանգարում են նրա մարդասիրական առաքելության իրականացմանը: Նման հայլերը մեծացնում են մեր ծախսերը եւ թույլ չեն տալիս սեռնդ ու դեղորայք հասցնել այն մարդկանց, որոնք դրա խիստ կարիքն են զգում», ասաց Լեմանը: ԱՄՆ Կոնգրեսի հաջորդ նստաշրջանը տեղի կունենա նոյեմբերի վերջերին:

ՍԱՅՈՒՆ, ՓԱՍՏ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանը շարունակում է ռազմական հրահրումները

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Չնայած ամիսներ առաջ հրադադարի դադարեցման վերաբերյալ ստորագրած համաձայնագրին եւ դաշտոնական բազմաթիվ հավաստիացումներին, ադրբեջանական կողմը շարունակում է չի դադարվել ռազմական գործողություններ իրականացնելու ակտիվ հաղարկանությունից: Ադրբեջանական բանակային կազմավորումները չեն դադարեցնում ռազմական գործողությունները ոչ միայն ԼՂՀում, այլեւ Հայաստանի սահմանային շարածքներում: ՀՀ դաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից ստացված հաղորդագրությունները վկայում են, որ Հայաստանի սահմանային գոտիներում վերջին օրերին ավելի են հաճախակիացել ռազմական միջադեպերը: Չնայած հրադադարի դադարեցման սկզբնալիքով հայկական սահմանապահները փորձում են հիմնականում ծեռնպահ մնալ ռազմական գործողություններին միջամտելուց, այնուամենայնիվ առանձին դեպքերում դա անհրաժեշտություն է դառնում: Ադրբեջանական կողմն ակտիվացրել է հայկական շարածքների գնդակոծումները նաեւ նախիջեւանյան շարածքներից: Ռազմական գործողությունների բիրախ են դառնում ոչ միայն Արարատի, այլեւ Մեղրիի շրջանի սահմանամերձ բնակավայրերը:

Հոկտեմբերի 11-ին հրադադարի հերթական խախտում է արձանագրվել Տավուշի շրջանի Ներքին Կարմիրաղբյուր եւ Շինարի գյուղերի սահմանագծում: Հայկական սահմանապահները դարձյալ ծեռնպահ են մնացել դաշտախան գործողություններից:

ՇՐՋԱՆ

Ի. Արբվինալի. «Թուրքիան սիրված է լավ աչքով նայել Հայաստանին»

Սեւծովյանն ավարտեց աշխատանքը

ՎԱՂՈՒՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՄԱՔՐԱՊ ԲՈՅՋՈՒՅԱՆ

Երեկ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում ավարտվեց Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի իրավաստաղաբանական հանձնաժողովի չորրորդ նիստը, որին մասնակցում են որը երկրների ներկայացուցիչներ: Ալբանիայից, Հայաստանից, Վրաստանից, Մոլդովայից, Ռումինիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Թուրքիայից: Նիստին դիտորդի կարգավիճակով ներկա էր նաեւ Հայաստանում Հունաստանի դեսպանը: Բացակայում են դիտորդի կարգավիճակ ունեցող Բուլղարիան եւ լիիրավ անդամ Ադրբեջանը: ՀՀ ԴԽ նախագահ Բաբկեն Արարքցյանի եւ ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ, ՍՏՀԽՎ-ի իրավաստաղաբանական հանձնաժողովի փոխնախագահ Դավիթ Վարդանյանի ողջույնի խոսքից հետո, նիստի մասնակիցները սկսեցին քննարկել օրակարգում դրված հարցերը: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Թուրքիայից Մուիքար Մահրամլին, քննարկվեց նաեւ ՍՏՀ երկրների միջեւ առանց այցագրի այցելություններ կատարելու հարցը: Դավիթ Վարդանյանի ասելով, այդ հարցը նախ կվերաբերի դաշտոնատար անձանց, դաշտազանավորներին, իսկ հետո միգուցե նաեւ գործարար մարդկանց եւ անհատ զբաղվողներին: Առայժմ հանձնաժողովը նախաձեռնեց եւ ընդունեց հանձնաժողովի նախագահությունը: Նախկին հանդիպումների ընթացքում, որոնք անցկացվել են Անկարայում, Կիեւում եւ Թբիլիսիում, քննարկվել են տնտեսական օրենքների ներդաշնակեցման հարցերը, ինչպես նաեւ ՍՏՀԽՎ-ի երկրներում կայունության եւ խաղաղության հասատանան խնդիրը:

Հիշեցնենք, որ հանդիպման ընթացքում Ադրբեջանի առաջարկին, ընդունվել է Հայաստանի ներկայացրած տարբերակը, այն է՝ քննարկել ոչ միայն Ղարաբաղի խնդիրը, այլեւ շրջանի բոլոր երկրներում առկա հակամարտությունները, ընդ որում սկսելով ոչ այնքան դժվար խնդրից, ինչպիսին Ղարաբաղի հարցն է: Արդեն որոշում է կայացված, որ անցկացվի Սեւծովյան ավազանի երկրներում կայունության եւ խաղաղության հարցերին նվիրված միջազգային սեմինար: Հանձնաժողովի աշխատանքների ընթացքում մեզ հաջողվեց զրուցել ՍՏՀԽՎ-ի գլխավոր քարտուղար, Թուրքիայի խորհրդարանի ներկայացուցիչ Ֆախր Քայբանջիի հետ:

Տես # էջ 2

ՎԱՇԻՆԳՏՈՆ

ԱՄՆ փնտրում է դարաբաղյան հարցի լուծումը

Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատնից ստացված տեղեկության համաձայն, ԱՄՆ դեսդեղարտամենտի մամլո քարտուղարի դաշտոնակատար Քրիսթին Շելլիի կողմից հոկտեմբերի 11-ին արվել է ներքոհիշյալ հայտարարությունը: «Մ. Նահանգները ակտիվորեն վնտրում է Լեռնային Ղարաբաղի ճգնաժամի լուծման ճանապարհներ: ԱՄՆ-ն առաջատար դեր է կատարում ԵԱՀԽ-ի վարած խաղաղ գործընթացում եւ ակտիվորեն աջակցում խաղաղարար բազմակողմանի ուժերի ստեղծման շուրջ ԵԱՀԽ-ի ջանքերին: Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի դեկավարությունների հետ ԱՄՆ-ի վերջերս տեղի ունեցած հանդիպումների եւ բանակցությունների ժամանակ Միացյալ Նահանգները մի շարք միջոցառումներ է առաջարկել խաղաղ կարգավորման համար, որը ներառում է հրադադարի շարունակումն ու ամրապնդումը եւ վստահության ավելացման համար միջոցների ծեռնարկումը: Մենք դաշտերազմող կողմերին կոչ ենք անում, որ նրանք որքան հնարավոր է շուտ համաձայնության գան այս կետերի առիթով եւ շարունակեն համագործակցել ԵԱՀԽ-ի հետ հակամարտության խաղաղ կարգավորման հարցում: ԱՄՆ-ը կշարունակի ակտիվ դեր կատարել ինչպես երկկողմ, այնպես էլ երկու կողմերի համար ընդունելի ճանապարհներով խաղաղ կարգավորմանը նպաստող բազմակողմանի բանակցություններում»:

ԵՏ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Տուրքի եւ Լաչինի հարցը մնացել է ադրբեջանցիների կոկորդում

Ինչպես արդեն հաղորդվել է, Բաքվում է գտնվում ԵԱՀԽ Մինսկի խմբի դաշտվիրակությունը: Ընդունելով նրանց Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը հայտարարել է, որ Տուրքի ու Լաչինի ազատումը ոչ թե մարտավարական, այլ ռազմավարական խնդիր է: Այդ իսկ դաշտճառով, ըստ նրա, «Երբ նշված տարածքները մնան գրավված, առնա երկու հանդարտություններ տեսականորեն դաշտերազմի մեջ կգտնվեն»: Հասանովի կարծիքով, ԵԱՀԽ որոշ երկրներ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում անտեսում են Տուրքի եւ Լաչինի դերը, ինչը չի կարող հարուցել դիվանագետների զարմանքը: «Երբ հայերը վերահսկեն Տուրքի ու Լաչինը, առնա հայտնի միջանցքով կշարունակվի զենքի առաքումը հակամարտության գոտի», ասել է Հասանովը: Նա միաժամանակ այն կարծիքն է հայտնել, որ հակամարտող կողմերի միջեւ ստեղծվող տարածքում տեղաբաշխվելիք միջազգային դիտորդները ոչ միայն պետք է նպաստեն կրակի դադարեցմանը, այլեւ վերահսկեն զորքերի դուրսբերումը գրավյալ տարածքներից:

Տարածաշրջան վեցօրյա այցի ընթացքում ԵԱՀԽ դաշտվիրակությունը կլինի Երեւանում եւ Ստեփանակերտում:

Խմբի ղեկավար Պեռ Անդերսոնը նշեց, որ այս այցի ընթացքում ԵԱՀԽ դաշտվիրակությունը մտադիր է քննարկել խաղաղարար գործողությունների մանրամասները միջազգային խաղաղարար ուժերի մասնակցությամբ: Մինսկի խումբը նպատակահարմար է գտնում անցկացնել առանձին հանդիպումներ զինվորական եւ դիվանագիտական մասնագետների միջեւ՝ հայ-ադրբեջանական հակամարտության գոտում վստահության եւ անվտանգության միջոցառումների իրականացման համար:

Պեռ Անդերսոնը հայտնեց, որ Մինսկի խմբի նախագահ Յան Էլիասոնը օրերս նշանակվել է Հվեդիայի արտաքին գործոց փոխնախարար: Հասան Հասանովի կարծիքով, այդ նշանակումը փաստորեն բարձրացնում է Մինսկի խմբի նախագահի կարգավիճակը եւ ընդլայնում նրա հնարավորությունները: «Մենք հուսով ենք, որ ԵԱՀԽ ներկայությունը եւ գործունեությունը մեր տարածաշրջանում այժմ կդառնա ավելի ակտիվ»:

«Մենք ուզում ենք Մինսկի խմբի գործունեության աշխուժացում, արդեն 5-րդ ամիսն է դանդաղորեն է հրադադարը, սակայն հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման իրական առաջխաղացում չկա, չնայած այդ ընթացքում շատ բանի կարելի էր հասնել», Պեռ Անդերսոնի հետ հանդիպման մասնակց իր հերթին ասաց նախագահ Ալիեւը:

ՓԱՍՏ, ՔՈՅՐԱ ՍԱՄՐԵ

ՀԱՄԱՌՈՏ

Ելցինն ազատեց Գերաշչենկոյին եւ Դուբինինին

ՍՈՉԻ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը կազմել է դեսպական հատուկ հանձնախումբ, որը դեսք է բացահայտի օդուղու փոխարժեքի կտրուկ անկման դաշտճառները: Այդ մասին նա այսօր Կրեմլում հայտնեց անվտանգության խորհրդին ներկայացրած դիմումի մեջ: Ռուսաստանի նախագահը ուղերձ է հղել Պետդումայի նախագահ Իվան Ռիբկինին՝ առաջարկելով զբաղեցրած դաշտոնից ազատել ՌԴ կենտրոնական բանկի տնօրեն Վիկտոր Գերաշչենկոյին: Այդ մասին այսօր Բորիս Ելցինը հաղորդել է անվտանգության խորհրդի նիստում: Բորիս Ելցինը հայտարարեց նաեւ, որ ստորագրել է ֆինանսների նախարարի դաշտոնակատարի դաշտոնից Սերգեյ Դուբինինին ազատելու հրամանագիրը:

Տես նաեւ # էջ 3

Ղազախստանում ընտրվեց նոր վարչապետ

ԱԼՄԱ ԱԹԱ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ղազախստանի նոր վարչապետ դարձավ Ակեժան Կազեգելդինը: Այսօր այդ դաշտոնում նրան նշանակելու մասին հրամանագիր ստորագրեց հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը: Վարչապետի առաջին տեղակալ հաստատվեց Նիգմատժան Իսինգարինը: Կազմակերպված կառավարության մեջ նա զբաղեցնում էր արդյունաբերության եւ առեւտրի նախարարի դաշտոնը:

ԱՇԽԱՐՀ

Ռոլֆ Էկեուս. «Իրանն այլեւս չի սպառնա հարեւաններին»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ծանուցել է Քուվեյթի սահմանից իր զինված ուժերի հիմնական մասի հեռացման մասին: Այդ մասին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահ Դեյվիդ Հենեյը (Մեծ Բրիտանիա) հայտնեց խորհրդի երեքշաբթի օրը կայացած դռնփակ նիստից հետո:

Միաժամանակ ՄԱԿ-ի Իրանի զինաթափման հատուկ հանձնախմբի նախագահ Ռոլֆ Էկեուսը հայտարարեց, թե Իրանն այլեւս ռազմական հնարավորություն չունի Քուվեյթին, Իրանին եւ Պարսից ծոցի մյուս երկրներին սպառնալու զանգվածային բնաջնջմամբ: Նա վստահություն հայտնեց, թե ՄԱԿ-ի հատուկ հանձնախումբը լիովին ոչնչացրել է Իրանի միջուկային զենքը եւ վերահսկողություն հաստատել այնտեղ զանգվածային բնաջնջման մյուս զինատեսակների արտադրության վրա:

Մինչդեռ, ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբների դեսքերի կոմիտեի նախագահ գեներալ Ջոն Շալիկաշվիլին երեքշաբթի օրն արտեղ հայտարարեց, թե ԱՄՆ-ը չի դադարեցնի զինված ուժն ու մարտական տեխնիկան Պարսից ծոցի շրջան փոխադրելը, քանի դեռ չի բացառվել վերջին օրերին դեղորեի կրկնության հնարավորությունը: Պենտագոնում ճեռազրույցի ընթացքում գեներալը հայտարարեց, թե ԱՄՆ-ը «դեսք է ձեռնարկի այնպիսի քայլեր, որոնք կբացառեին հարեւաններին կրկին սպառնալու Իրանի հնարավորությունները»:

«Մերձավոր Արեւելքում հաշտության դաշտանագիրը հնարավոր է»

ԴԱՄԱՍԿՈՍ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ դեսքարտուղար Ուորեն Քրիստոֆերն այսօր սիրիա-իսրայելական հարաբերությունների հարցերի շուրջ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի հետ իր բանակցություններից հետո հայտարարեց. «Ես համոզված եմ, որ երկու կողմերը շարժվում են դեպի հաշտության դաշտանագիր, թեեւ մինչեւ օրս դաշտանվում են մեծ տարաձայնություններ: Դա վկայում է, որ մենք գնում ենք ճիշտ ճանապարհով»: ԱՄՆ դեսքարտուղարը Ասադի հետ քննարկեց նաեւ իրաք-իսրայելական սահմանում տիրող իրադրությունը: «Նախագահը վճռականորեն դաշտանեց մեր գործողությունները», ասաց Քրիստոֆերը:

Միաժամանակ Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը Կենեսետում հայտարարեց, որ համաձայնություն է ձեռք բերվել Սիրիայի հետ հաշտության եւ երկու երկրների հարաբերությունների լրիվ կարգավորման դիմաց երեք տարվա Գոլանի բարձունքներից իսրայելական զորքերի աստիճանական դուրսբերման շուրջը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Սկիզբը էջ 1

– Պրն. Քայբանցի, Ստամբուլում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կայացած ոչ պաշտոնական բանակցությունների ժամանակ, նախագահ Դեմիրելը երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորում էր արցախյան ճակատներում հրադադարի հաստատմամբ: Ինչպես գիտեք, արդեն հինգ ամիս է, ինչ հայ-թուրքական հարաբերություններում որեւէ առաջընթաց չկա: Ինչպե՞ս կմեկնաբանեիք այդ փաստը:

– Ես Թուրքիայի անունից խոսել չեմ կարող, բանի որ դարգաղես ՍՏՀԽՎ գլխավոր քարտուղար եմ եւ ինչ-որ տեղ նաեւ ներկայացնում եմ Հայաստանին, Ռուսաստանին եւ այլ երկրներին միջազգային հարաբերություններում: Ըստ իս դիտարկումների, խոսքը վերաբերում է ոչ թե հրադադարին, այլ հիմնահարցի լուծմանը: Միայն դրանից հետո հնարավոր կլինի շարունակել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկու տարի առաջ սկսած եւ ընդհատված երկխոսությունը ու կարճ ժամանակամիջոցում հասնել առավելագույն արդյունքի: Սա ես ասում եմ որպես Թուրքիայի քաղաքացի:

– Չունենալով դիվանագիտական հարաբերություններ, Թուրքիան եւ Հայաստանը ՍՏՀԽՎ-ի շրջանակներում համագործակցելու ի՞նչ հնարավորություններ ունեն:

– Նման հարաբերություններ անդայման կլինեն: Ինչպես տեսնում եք, չնայած մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ չկան, Հայաստանում է գտնվում այսպիսի բարձր մակարդակի թուրքական պատվիրակություն: Սա մի պաշտոնական պատվիրակություն է, որտեղ ներկայացված են թուրքական խորհրդարանում պատգամավորական տեղերի 50 տոկոսից ավելին գրաղեցնող երկու «Ճշմարիտ ուղի» եւ «Մայր հայրենիք» կուսակցությունները: Մենք այս տարածքում հազար տարուց ավելի է միասին ենք ապրում եւ դեռ կապրենք տասնյակ հազարամյակներ: Եւ ստիպված ենք վարժվել կամաչեղ գոյակցությանը ու սիրել միմյանց: Հետեւաբար, մենք պետք է իրար հետ համագործակցենք: Տնտեսական առումով երկրներս մրցակից չեն լինում, այլ լրացնում են իրար: Մենք ունենք ընդհանուր մշակույթ: Երկու օր է, որ այստեղ ճաշակում եմ թուրքական խոհանոցի բարիքները, խոսում եմ թուրքերեն: Ստամբուլում ունեմ շատ հայ բարեկամներ: Մենք շատ ընդհանրություններ ունենք նաեւ ուկրաինացիների, ռուսինացիների հետ: Բայց դա էության այդ հարցը կարգավորման հետ: Հենց որ այդ հարցը լուծվի, կհաստատվեն ամենաբարձր մակարդակի դիվանագիտական հարաբերություններ: Ես լավատես եմ:

Ի դեպ, մեր ցանկերով, դեռ կիեւյան հանդիպման ժամանակ Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների միջեւ երկխոսության սրմոդոս ստեղծվեց:

– Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման ի՞նչ հեռանկարներ եք տեսնում, եթե մի պահ վերանանք Ղարաբաղի հարցից:

– Մեծ հեռանկարներ եմ տեսնում: Այսօր Թուրքիայում Հայաստանի նկատմամբ նախապաշարմունքներ չկան: Թուրքիայի այսօրվա ամենահեղինակավոր երաժիշտը հայ է: Ազգությամբ հայ է նաեւ Թուրքիայի լավագույն խոհանոցի բարիքները Արա Գյուլերը:

Ես համոզված եմ, որ Հայաստանի ներկա սերունդն էլ առանձնակի հակակրանք չունի Թուրքիայի նկատմամբ: Այնուամենայնիվ, համագործակցության զարգացման առաջին դարաշրջանում կարող խաղաղության հաստատումն է:

Վերջ տված մեր հարցին, Թուրքիայի մյուս ներկայացուցիչը Իբրահիմ Արթվինլին (Թուրքիայում կառավարող «Ճշմարիտ ուղի» կուսակցության պատգամավոր, ՍՏՀԽՎ-ում իրավասության Թուրքիայի պատվիրակության ղեկավար) պատասխանից. – Այն փաստը, որ դիվանագիտական հարաբերությունների բացակայության եւ, ինչու՞ բարգենք, որոշակի սառնության պայմաններում, Թուրքիան Հայաստան է գործուղել այսպիսի բարձր մակարդակի մի պատվիրակություն, դրանով իսկ հաստատել է իր բարյացակամ եւ բարեկամական վերաբերմունքը: Մենք այստեղ ենք գտնվում հատուկ այս հանգամանքը ընդգծելու համար եւ վստահված ենք, որ մեկ ժամվա ճանապարհը ստիպված ենք եղել՝ անցնել վեց ժամում Հայաստան գալով Մոսկվայով: Շատ գավալի է, որ անմիջական հարեւանների միջեւ հաղորդակցության խնդիրների լուծումը բարդանում է: Երեւի նկատել եք, որ մենք խորհրդակցությունում ամենաբազմամարդ պատվիրակությունն ենք: Այստեղ ներկա են իրավասության հարցերի հանձնաժողովի բոլոր անդամները եւ նախագահը: Հուսով եմ, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ խնդիրները կարճ ժամանակում կլուծվեն, եւ մեր տարածաշրջանի ժողովուրդները կսկսեն համատեղ աղել եւ ափսեել:

– Ի՞նչ խնդիրների մասին է խոսքը: Չէ՞ որ Թուրքիան պաշտոնապես հայտարարում է, որ իսկը Հայաստանի հետ խնդիրներ չունի, կա միայն Ղարաբաղի գործոնը:

– Իհարկե, ես նկատի ունեի հայ-ադրբեջանական հակամարտությունը, որն անտեսել չենք կարող: Անշուշտ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ որեւէ խնդիր չկա: Բոլոր հարցերը կարգված են Ադրբեջանի հետ:

– Ղարաբաղում արդեն հրադադար է, բայց Թուրքիայի կողմից որեւէ քայլ չի ձեռնարկվում ոչ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, ոչ էլ տրանսպորտի վերացման ուղղությամբ:

– Պատմության մեջ առաջին անգամ Թուրքիայի պաշտոնական մի պատվիրակություն է եկել Հայաստան: Հրադադարի առաջին ամսից հետո կողմերի միջեւ բանակցություններ պետք է սկսվեին, դրանք ուշացան, իսկ պատճառներին չեմ ուզում անդրադառնալ: Անկախ մեզանից, թե ով կլինի առաջին քայլը կատարող, մեծ նշանակություն ունի խաղաղության հաստատումը:

– Անդրադառնանք առեւտրատնտեսական հարաբերություններին: Անկախ ամեն ինչից, այսօր Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կողմնակի ճանապարհներով Իրանի եւ Վրաստանի վրայով, բավական զգալի առեւտրական գործարքներ են իրականացվում: Դա դժվարացնում է թե հայ, թե թուրք գործարարների աշխատանքը: Ինչու՞ չփորձել հաղթահարել այդ խոչընդոտը:

– Հասկանալի է, որ այդ ճանապարհների օգտագործումը բանկացնում է ապրանքների գինը, եւ օրինակ, Հայաստանի բնակիչը մեկ դոլար արժողությամբ ապրանքին վճարում է երկու դոլար: Այս վիճակից դժգոհ են նաեւ թուրք գործարարները, որոնք երրորդ երկրներում դժվարությունների են հանդիպում: Ի՞նչ կարելի է անել: Ժամ առաջ պետք է լուծել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու խնդիրը: Մենք մեղավորներ չենք փնտրում: Կարեւորը առաջին քայլը կատարելն է: Իհարկե, դա կախված սուսական հարաբերություններից: Թուրքական կողմը պատրաստ է այդ քայլին, միայն սպասում է, որ միջազգային կազմակերպությունների մակարդակով Ղարաբաղի հարցի լուծումը գտնվի: Թուրքիան ստիպված է լավ աչքով նայել Հայաստանին եւ ունենալ նրա հետ առեւտրատնտեսական հարաբերություններ: Թուրքիան շահագրգռված է, որ Անդրկովկասում Վրաստանում, Ադրբեջանում եւ Հայաստանում լիովին վերահաստատվի քաղաքական կայունությունը: Նշեմ, որ տարածաշրջանի անկայունությունը իր կնիքն է թողնում նաեւ Ռուսաստանի իրավիճակի վրա:

– Ձեր կարծիքով, մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ավելի չէ՞ր հեշտացնի Ղարաբաղի հարցի լուծումը:

– Մենք չենք կարող անտեսել Թուրքիայի հասարակական կարծիքը: Նախկինում, երբ մենք բոյկոտում էինք մարդասիրական օգնության առաքումը Հայաստան Թուրքիայի տարածքով, ենթարկվում էինք հզոր ճնշման: Բոլոր կուսակցություններն էլ ստիպված են հաշվի նստել իրենց երկրի հասարակական կարծիքի հետ: Մենք գտնում ենք, որ հարցը լոկ Հայաստանին չի վերաբերում, կան երկրներ, որոնք հրահրում են թե Հայաստանին, թե Անդրկովկասի մյուս հանրապետություններին: Այդ ուժերը շահագրգռված չեն խաղաղության հաստատմամբ: Դա դրսի էլ ենք հասկանում: Չէ՞ որ կայուն խաղաղությունը միայն կնպաստեր մեր երկրների բարգավաճմանը:

– Չե՞ք կարծում, որ այսօրվա խնդիրները չէին լինի, եթե 1990 թ-ին, երբ Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, նաեւ անմիջապես հաստատեր դիվանագիտական հարաբերություններ:

– Հայաստանի անկախությունը ճանաչող առաջին երկրներից մեկը Թուրքիան էր: Իրոք, որ դանդաղ բաց է թողնված: Երկու կառավարություններն էլ պետք է օգտագործեին այդ հնարավորությունը:

Երեկ, հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո Մուսթաֆա Մահրամլին նախ շնորհակալություն հայտնեց Հայաստանի խորհրդարանին եւ հայ ժողովրդին նիստը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, եւ ասաց, թե տարաձայնություններ չեն եղել:

Նշենք նաեւ, որ հանձնաժողովի հաջորդ նիստում կքննարկվի բնական ռեսուրսների (Չեռնոբիլ, Սոչի, Սոլոթվա) հարցը:

ՇՐՋԱՆ

Իբրահիմ Արթվինլի. «Թուրքիան ստիպված է լավ աչքով նայել Հայաստանին»

Սեւծովյանը ավարտեց աշխատանքը

յաստանի եւ Թուրքիայի միջեւ երկու տարի առաջ սկսած եւ ընդհատված երկխոսությունը ու կարճ ժամանակամիջոցում հասնել առավելագույն արդյունքի: Սա ես ասում եմ որպես Թուրքիայի քաղաքացի:

– Չունենալով դիվանագիտական հարաբերություններ, Թուրքիան եւ Հայաստանը ՍՏՀԽՎ-ի շրջանակներում համագործակցելու ի՞նչ հնարավորություններ ունեն:

– Նման հարաբերություններ անդայման կլինեն: Ինչպես տեսնում եք, չնայած մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ չկան, Հայաստանում է գտնվում այսպիսի բարձր մակարդակի թուրքական պատվիրակություն: Սա մի պաշտոնական պատվիրակություն է, որտեղ ներկայացված են թուրքական խորհրդարանում պատգամավորական տեղերի 50 տոկոսից ավելին գրաղեցնող երկու «Ճշմարիտ ուղի» եւ «Մայր հայրենիք» կուսակցությունները: Մենք այս տարածքում հազար տարուց ավելի է միասին ենք ապրում եւ դեռ կապրենք տասնյակ հազարամյակներ: Եւ ստիպված ենք վարժվել կամաչեղ գոյակցությանը ու սիրել միմյանց: Հետեւաբար, մենք պետք է իրար հետ համագործակցենք: Տնտեսական առումով երկրներս մրցակից չեն լինում, այլ լրացնում են իրար: Մենք ունենք ընդհանուր մշակույթ: Երկու օր է, որ այստեղ ճաշակում եմ թուրքական խոհանոցի բարիքները, խոսում եմ թուրքերեն: Ստամբուլում ունեմ շատ հայ բարեկամներ: Մենք շատ ընդհանրություններ ունենք նաեւ ուկրաինացիների, ռուսինացիների հետ: Բայց դա էության այդ հարցը կարգավորման հետ: Հենց որ այդ հարցը լուծվի, կհաստատվեն ամենաբարձր մակարդակի դիվանագիտական հարաբերություններ: Ես լավատես եմ:

Ի դեպ, մեր ցանկերով, դեռ կիեւյան հանդիպման ժամանակ Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների միջեւ երկխոսության սրմոդոս ստեղծվեց:

– Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման ի՞նչ հեռանկարներ եք տեսնում, եթե մի պահ վերանանք Ղարաբաղի հարցից:

– Մեծ հեռանկարներ եմ տեսնում: Այսօր Թուրքիայում Հայաստանի նկատմամբ նախապաշարմունքներ չկան: Թուրքիայի այսօրվա ամենահեղինակավոր երաժիշտը հայ է: Ազգությամբ հայ է նաեւ Թուրքիայի լավագույն խոհանոցի բարիքները Արա Գյուլերը:

Ես համոզված եմ, որ Հայաստանի ներկա սերունդն էլ առանձնակի հակակրանք չունի Թուրքիայի նկատմամբ: Այնուամենայնիվ, համագործակցության զարգացման առաջին դարաշրջանում կարող խաղաղության հաստատումն է:

Վերջ տված մեր հարցին, Թուրքիայի մյուս ներկայացուցիչը Իբրահիմ Արթվինլին (Թուրքիայում կառավարող «Ճշմարիտ ուղի» կուսակցության պատգամավոր, ՍՏՀԽՎ-ում իրավասության Թուրքիայի պատվիրակության ղեկավար) պատասխանից. – Այն փաստը, որ դիվանագիտական հարաբերությունների բացակայության եւ, ինչու՞ բարգենք, որոշակի սառնության պայմաններում, Թուրքիան Հայաստան է գործուղել այսպիսի բարձր մակարդակի մի պատվիրակություն, դրանով իսկ հաստատել է իր բարյացակամ եւ բարեկամական վերաբերմունքը: Մենք այստեղ ենք գտնվում հատուկ այս հանգամանքը ընդգծելու համար եւ վստահված ենք, որ մեկ ժամվա ճանապարհը ստիպված ենք եղել՝ անցնել վեց ժամում Հայաստան գալով Մոսկվայով: Շատ գավալի է, որ անմիջական հարեւանների միջեւ հաղորդակցության խնդիրների լուծումը բարդանում է: Երեւի նկատել եք, որ մենք խորհրդակցությունում ամենաբազմամարդ պատվիրակությունն ենք: Այստեղ ներկա են իրավասության հարցերի հանձնաժողովի բոլոր անդամները եւ նախագահը: Հուսով եմ, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ խնդիրները կարճ ժամանակում կլուծվեն, եւ մեր տարածաշրջանի ժողովուրդները կսկսեն համատեղ աղել եւ ափսեել:

– Ի՞նչ խնդիրների մասին է խոսքը: Չէ՞ որ Թուրքիան պաշտոնապես հայտարարում է, որ իսկը Հայաստանի հետ խնդիրներ չունի, կա միայն Ղարաբաղի գործոնը:

– Իհարկե, ես նկատի ունեի հայ-ադրբեջանական հակամարտությունը, որն անտեսել չենք կարող: Անշուշտ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ որեւէ խնդիր չկա: Բոլոր հարցերը կարգված են Ադրբեջանի հետ:

– Ղարաբաղում արդեն հրադադար է, բայց Թուրքիայի կողմից որեւէ քայլ չի ձեռնարկվում ոչ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, ոչ էլ տրանսպորտի վերացման ուղղությամբ:

– Պատմության մեջ առաջին անգամ Թուրքիայի պաշտոնական մի պատվիրակություն է եկել Հայաստան: Հրադադարի առաջին ամսից հետո կողմերի միջեւ բանակցություններ պետք է սկսվեին, դրանք ուշացան, իսկ պատճառներին չեմ ուզում անդրադառնալ: Անկախ մեզանից, թե ով կլինի առաջին քայլը կատարող, մեծ նշանակություն ունի խաղաղության հաստատումը:

– Անդրադառնանք առեւտրատնտեսական հարաբերություններին: Անկախ ամեն ինչից, այսօր Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կողմնակի ճանապարհներով Իրանի եւ Վրաստանի վրայով, բավական զգալի առեւտրական գործարքներ են իրականացվում: Դա դժվարացնում է թե հայ, թե թուրք գործարարների աշխատանքը: Ինչու՞ չփորձել հաղթահարել այդ խոչընդոտը:

– Հասկանալի է, որ այդ ճանապարհների օգտագործումը բանկացնում է ապրանքների գինը, եւ օրինակ, Հայաստանի բնակիչը մեկ դոլար արժողությամբ ապրանքին վճարում է երկու դոլար: Այս վիճակից դժգոհ են նաեւ թուրք գործարարները, որոնք երրորդ երկրներում դժվարությունների են հանդիպում: Ի՞նչ կարելի է անել: Ժամ առաջ պետք է լուծել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու խնդիրը: Մենք մեղավորներ չենք փնտրում: Կարեւորը առաջին քայլը կատարելն է: Իհարկե, դա կախված սուսական հարաբերություններից: Թուրքական կողմը պատրաստ է այդ քայլին, միայն սպասում է, որ միջազգային կազմակերպությունների մակարդակով Ղարաբաղի հարցի լուծումը գտնվի: Թուրքիան ստիպված է լավ աչքով նայել Հայաստանին եւ ունենալ նրա հետ առեւտրատնտեսական հարաբերություններ: Թուրքիան շահագրգռված է, որ Անդրկովկասում Վրաստանում, Ադրբեջանում եւ Հայաստանում լիովին վերահաստատվի քաղաքական կայունությունը: Նշեմ, որ տարածաշրջանի անկայունությունը իր կնիքն է թողնում նաեւ Ռուսաստանի իրավիճակի վրա:

– Ձեր կարծիքով, մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ավելի չէ՞ր հեշտացնի Ղարաբաղի հարցի լուծումը:

– Մենք չենք կարող անտեսել Թուրքիայի հասարակական կարծիքը: Նախկինում, երբ մենք բոյկոտում էինք մարդասիրական օգնության առաքումը Հայաստան Թուրքիայի տարածքով, ենթարկվում էինք հզոր ճնշման: Բոլոր կուսակցություններն էլ ստիպված են հաշվի նստել իրենց երկրի հասարակական կարծիքի հետ: Մենք գտնում ենք, որ հարցը լոկ Հայաստանին չի վերաբերում, կան երկրներ, որոնք հրահրում են թե Հայաստանին, թե Անդրկովկասի մյուս հանրապետություններին: Այդ ուժերը շահագրգռված չեն խաղաղության հաստատմամբ: Դա դրսի էլ ենք հասկանում: Չէ՞ որ կայուն խաղաղությունը միայն կնպաստեր մեր երկրների բարգավաճմանը:

– Չե՞ք կարծում, որ այսօրվա խնդիրները չէին լինի, եթե 1990 թ-ին, երբ Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, նաեւ անմիջապես հաստատեր դիվանագիտական հարաբերություններ:

– Հայաստանի անկախությունը ճանաչող առաջին երկրներից մեկը Թուրքիան էր: Իրոք, որ դանդաղ բաց է թողնված: Երկու կառավարություններն էլ պետք է օգտագործեին այդ հնարավորությունը:

Երեկ, հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո Մուսթաֆա Մահրամլին նախ շնորհակալություն հայտնեց Հայաստանի խորհրդարանին եւ հայ ժողովրդին նիստը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, եւ ասաց, թե տարաձայնություններ չեն եղել:

Նշենք նաեւ, որ հանձնաժողովի հաջորդ նիստում կքննարկվի բնական ռեսուրսների (Չեռնոբիլ, Սոչի, Սոլոթվա) հարցը:

ԱՆՑՈՒՄԱՐՑ

Զինծառայողների թվաքանակը չի ավելանա

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը մինչեւ 2 տարի երկարացնելու դեպքում հանրապետության պաշտպանության ուժերի թվաքանակը չի ավելանա: Այդ թվաքանակը կպահպանվի ի հաշիվ պայմանագրային զինծառայության: Այս մասին հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Պարտադիր զինծառայության ժամկետը վեց ամսով երկարացնելը հնարավորություն կտա հանգստի ուղարկել պայմանագրային զինծառայողներին, որոնք հանրապետության զինված ուժերում ծառայում են արդեն մի քանի տարի: Դա հնարավորություն կտա որոշակի առումով կրճատել նաեւ բանակի համար հանրապետության բյուջեից հատկացվող գումարների քանակը, որով հետեւ պայմանագրային զինծառայողի աշխատավարձը մի քանի անգամ բարձր է պարտադիր զինծառայողների համար սահմանված գումարից:

ՓԵԴ-ը գործում է Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Միջազգային մարդասիրական կազմակերպություններից եւս մեկը՝ «Փրկեք երեխաներին» դաշնությունը (ՓԵԴ) իր ակտիվ գործունեությունն է ծավալել Հայաստանում: Ներկայումս մայրաքաղաքում հաստատվել են նրա Հայաստանի եւ կովկասյան տարածաշրջանի գրասենյակները (Հայաստանի գրասենյակի տնօրենն է պրն. Մայլ Սմիթնթայերը, տարածաշրջանինը՝ պրն. Ջո Մարֆը): ՓԵԴ-ի ծրագրերը հիմնականում ուղղված են էներգետիկական, առողջապահական եւ սննդի կարիքների բավարարմանը, նախատեսված են անապահով խավերի համար, ինչպես օրինակ բուսակառուցները ու թերզարգացած երեխաները: Ի լրումն, «Փրկեք երեխաներին» դաշնությունը վերլուծության է ենթարկում Հայաստանի ներկա եւ ապագա կարիքները: Ինչպես ներկայացրեցին կազմակերպության ներկայացուցիչները, ՓԵԴ-ը մասնավոր, ոչ շահութաբեր, ոչ աղանդային միջազգային գործունեությունն ստեղծեց որպես պատասխան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եւրոպայում տեղահանված երեխաների պաշտպանության կոչին: Ներկայումս ՓԵԴ-ը միջազգային ծրագրեր է իրականացնում 36 երկրներում:

Ինչ վերաբերում է ՓԵԴ-ի կովկասյան գործունեության դերին, առաջնահերթությամբ տարբերվում է մյուս երկրներում ծավալված առաքելությունից: Տարածաշրջանում կազմակերպությունը հանդես է գալիս իբրեւ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Կովկասի արտակարգ եւ մարդասիրական օգնության ծրագիր» կազմակերպիչ օղակ՝ տնօրինելով 3 հանրապետություններին հատկացված 50 մլն. դոլար բյուջեն:

Դիվանագիտական շաբաթ

Հոկտեմբերի 7-ին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին իր հավատարմագիրը հանձնեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության նոր դեսպան Անդրեյ Ուռնովը: Հոկտեմբերի 8-ին Անդրեյ Ուռնովին ընդունեց նաեւ ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը: Հոկտեմբերի 7-ին ՀՀ նախագահին իր հավատարմագիրն է հանձնել նաեւ Հայաստանում Հունաստանի նոր նշանակված դեսպան Յակովոս Աղեցիոսը: Հոկտեմբերի 7-ին Բրյուսելից Հայաստան վերադարձավ ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը, որն այնտեղ ստորագրեց ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը:

Հոկտեմբերի 8-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում բացվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո անցկացվող Հայաստանի երիտասարդության պետական քաղաքականության ձեւավորման հիմնախնդիրներին նվիրված եռօրյա սեմինար-խորհրդակցություն:

ԵՐԵՎԱՆ

Հիմնադրամը կոչ է անում անցնել ազգային տուրքի

Ինչպես հայտնի է, «Հայաստան» համահայկական հիմնադրամն այսօր իր վրա է վերցրել Հայաստանի եւ Ղարաբաղի համար կենսական վիթխարի նշանակություն ունեցող մի շարք առանցքային օբյեկտների շինարարությունը եւ հաջողությամբ իրականացնում է այդ աշխատանքները: Ընդ որում, արդեն իսկ մեկնված են կամ մեկնվում են նոր ծրագրեր, որոնք ուղղված են լինելու Լեռնային Ղարաբաղի ենթակառուցվածքների զարգացմանը: Նախատեսվում է կարգավորել ԼՂՀ բոլոր շրջկենտրոնների եւ Ստեփանակերտի ջրամատակարարումը, վերանորոգել Ստեփանակերտ-Լաչին եւ Մարտունի-Կարմիր Շուկա ճանապարհները, Շուշիում վերականգնել ռեալական ուսումնարանը եւ այլն: Այլ կերպ ասած, «Արցախ» ծրագիրն ընդլայնվում է, եւ 1994-95 թթ. նախատեսվում է այդ ծրագրով իրականացնել մոտ 20 մլն. դոլարի աշխատանք: Հաջողությամբ իրականացվում են նաեւ «Ճանգեզուր» եւ «Ադեցի գոտի» ծրագրերը, եւ, ինչպես երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նշեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, առայժմ չի եղել այնպիսի դեպք, որ աշխատանքները դադարեցվեն նյութական միջոցներ չլինելու պատճառով:

Սակայն հիմնադրամի ծրագրերը մեծ են, իսկ դա նշանակում է, որ ազգային տուրքի գաղափարը դառնում է օրվա հրամայական: Առայժմ այն տպավորությունն է ստեղծվում, թե հիմնադրամը գործում է եւ պետք է գործի բացառապես սպիտակահայության միջոցներով, մինչդեռ իրականում, ինչպես տեսնում ենք, Պետրոսյանը, հիմնադրամին մասնակցելը յուրաքանչյուր ազգային պարտքի գիտակցության, պատվի ու խղճի գործն է, եւ մենք ամենքս պետք է մասնակցենք դրան տալով ինչ հնարավոր է: Արդեն պատրաստ են հիմնադրամի հայ տաքերիկները, որտեղ ցանկացողները (անհատներ կամ ձեռնարկություններ) կարող են նշել, թե ամսական քանի դրամ են պատրաստ փոխանցել հիմնադրամին՝ հանուն Հայաստանի եւ Արցախի զորացման: Ընդ որում, յուրաքանչյուր տարեվերջին լրացված հայտերի հիման վրա բարեգործներին (անկախ ազգային տուրքի չափից) կտրվեն ազգային տուրքին մասնակցությունը հավաստող վավերագրեր:

Տիկ. Պետրոսյանը տեղեկացրեց նաեւ, որ առաջիկայում ինքը հանդիպումներ կունենա մի՝ շարք գործարարների տնօրենների եւ ափսեակիցների հետ՝ բացատրելու հիմնադրամի գործունեության մեխանիզմներն ու ծրագրերը: Հուսանք, որ ազգային տուրքի գաղափարը լայն աջակցություն կգտնի ժողովրդի մեջ, քանի որ հիմնադրամը ծառայում է ոչ թե ինչ-որ կառավարության կամ կուսակցության, այլ պետությանը, եւ կոչված է նպաստել ժողովրդի բարեկեցությանը: Հիմնադրամի հասցեն հետեւյալն է. ՀՀ կենտրոնական բանկ, 700606, ԼՂՀ կենտրոնական բանկ, 70003:

ԱՐՄԵՆ ԲԱՐԱԴԱՍՅԱՆ,

ՈՍՍԿՈՒՍ ԱՇԽԱՏԱԿԱՆ ՕՐԱՑԵՐՈՑ
Հանրապետության 47 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Azg» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (7 88521 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածները ՊԱՌԼ ԴԱԼԼԱՊԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային տարածքը «Azg» թերթի
Azg
ազգային օրաթերթ
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՀՐՋԱՆ ԱՊՀ

Անցած շաբաթ Վրաստանի հեռուստատեսությունը հաղորդեց հանրաքվեության խորհրդարանի որոշումը Ջաբա Իոսելիանիի հայտարարության տեքստը: Այնտեղ ասվում է, որ «եթե աբխազական կողմը իր զինված կազմավորումները մտցնի Կոդորի կիրճ, խոխտելով Մոսկվայի մայիսի 14-ի համաձայնագիրը, եւ եթե հալածի վրացի բնակչությանը, ապա «Մխեդրիոնի» ջոկատները անմիջապես կմտնեն Կոդորի կիրճ»:

Ջաբա Իոսելիանիի այդ հայտարարությունը պատահական չէ: Վրացական կազմավորումների դուրսբերման խնդիրը սուր է, եւ դրա լուծման անհրաժեշտությունն ազդում է նախեւառաջ վրացի գաղթականների Աբխազիա վերադառնալու ժամկետների վրա: Աբխազական կողմը պնդում է, որ վրացական կազմավորումները դուրս բերվեն Կոդորի կիրճից եւ այստեղ բերվեն աբխազական իրավասության ստորաբաժանումներ: Հենց դրա դեմ է բողոքում Ջաբա Իոսելիանին, խոստանալով «անհապաղ այնտեղ մեկնել ռազմական գործողություններին մասնակցելու համար»:

Կոդորի կիրճի խնդիրը հակամարտության գոտի ռուսական խաղաղարար ուժեր մտցվելու պահից ի վեր ամենաբարդ խնդիրներից մեկն է: Վրացական կողմի պնդման համաձայն, այդ կիրճում գտնվում են 200 զինված աբխազներ: Ըստ էության, հենց այդ հանգամանքի պատճառով է, որ վրացական կազմավորումները մինչեւ օրս դուրս չեն բերվել կիրճից:

Բանակցությունների մի քանի փուլերից հետո առաջվեց, որ այդ վայրում տեղաբաշխված վրացական ռազմական տեխնիկայի չլիով դուրսբերումից կամ ոչնչացումից հետո, աբխազական կազմավորումները նույնպես կհեռանան կիրճի տարածքից, որտեղ կմնան միայն Ռուսաստանի խաղաղարար զորքեր: Այդ մասին հայտարարեց վրաց-աբխազական հակամարտության գոտում տեղաբաշխված ռուսական խաղաղարար ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Յակուշեւը:

Վրացական կողմը պահանջում է, որ դուրս բերվող տեխնիկան ոչ թե ոչնչացվի, այլ հանձնվի Կոդորի կիրճից ոչ հեռու գտնվող վրացական բանակի հատվածներին:

Մի խոսքով, առկա է հաղթական առեւտուր, որտեղ Ջաբա Իոսելիանին իր «Մխեդրիոնի» կողմից կատարում է առաջին ջութակի դերը:

Փրկարարների «Մխեդրիոնի» կողմը ստեղծվել է 1989 թ. օգոստոսին: Թբիլիսիի 1989 թ. ապրիլի 9-ի ողբերգական դեպքերը Ջաբա Իոսելիանիին հանգեցրին այն հետեւության, որ հարկավոր է զինված կազմավորումներ ստեղծել ազգի պաշտպանության համար: 1989 թ. ամռանը Մառնեուլի շրջանում վրացիների եւ ադրբեջանցիների հարաբերությունները հիշ էր մնացել հասցնեին արյունահեղության (Մառնեուլում բռնաբարվել էին վրացուհիներ):

Դրանից հետո Մառնեուլի դեղեհրին մասնակցած մոտ 30 մարդ հավաքվեցին Թբիլիսիի «Դինամո» մարզադաշտում եւ իրենց անվանեցին «Մխեդրիոնի» ջոկատ: Հրամանատար դարձավ Ջաբա Իոսելիանին: Նա անմիջապես հռչակեց «Մխեդրիոնիի» քաղաքական նպատակները. «Մենք չենք ենթարկվում քաղաքական որեւէ ուժի եւ պետական կառույցի, այլ ծառայում ենք ազգի շահերին: Մենք ազգամիջյան հակամարտություններին կմասնակցենք խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար»: Եւ իրոք, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի սկզբնական պատերազմների սկզբնական շրջանում «Մխեդրոնիի» անդամներն ազնվորեն կատարում էին իրենց պարտականությունները:

Ըստ երեւույթին, Ջաբա Իոսելիանին ուզում է հենց այդ սկզբունքներն վերածնել «Մխեդրիոնի» կողմից իր գործունեության մեջ: Այսինքն, լինելով Վրաստանի խորհրդարանում վրաց-աբխազական հակամարտության կարգավորման հանձնաժողովի նախագահը, Ջաբա Իոսելիանին ցանում էր, որ անողայման ստեղծվի Էդուարդ Շեւարդնաձեի խաղաղասիրության հակակշիռը: Այն բանից հետո, երբ Ջաբա Իոսելիանին նշանակվեց Ժնեւում աբխազական կողմի հետ վարվող բանակցություններում Վրաստանի պատվիրակության ղեկավար, նա իր պարտականությունները, փաստորեն, չկարողացավ կատարել իր անցիջոնականության պատճառով: Այդ ամենից հետո վրաց-աբխազական հակամարտության կարգավորման փաստաթղթի տակ դրված չէ Իոսելիանիի ստորագրությունը:

Այժմ, երբ Աբխազիայի հակամարտության կարգավորումը կարեւոր փուլ է թեւակոխել, Ջաբա Իոսելիանին կրկին «Օլիմպոսում» է եւ դարձյալ ազգի պաշտպանի դերում: Իրականում «Մխեդրիոնի» կողմը չտանի այնպիսի դեր, որ ուզում է նշել Ջաբա Իոսելիանին:

1992 թ. հունիսին Վրաստանի նախարարների կաբինետը հաստատեց Ջաբա Իոսելիանիի գլխավորած փրկարարների կառույցի կանոնադրությունը: 1992 թ. աշնանից կառույցը մտավ վրացական բանակի կազմի մեջ: «Մխեդրիոնի» կառույցի հիմնական պարտականությունները են տարերային եւ բնական աղետների, արդյունաբերական եւ այլ վթարների, խոշոր հրդեհների դեղում փրկարարական աշխատանքների կազմակերպումը, բնակչության տեղային դուրսբերման աղահովումը եւ այլն: Ամեն ինչից երեւում է, որ «Մխեդրիոնի» հրամանատար Ջաբա Իոսելիանին չի ուզում կորցնել իր կաղերը ոչ ընդդիմության, ոչ էլ Էդուարդ Շեւարդնաձեի կառավարող վարչակարգի հետ: Եւ երբ այս տարվա մայիսին «անկախության» զորահանդեսում «Մխեդրիոնին» դարձավ վրացական բանակի կորիզը, ապա այժմ «Մխեդրիոնին» հիմնականում զբաղվում է գաղթականների Աբխազիա վերադառնալու հարցերով: Սակայն, այժմ տեղի է ունենում հենց այն «քաղաքական առեւտուրը», որի մասին խոսվեց վերեւում:

Վրաստանի ընդդիմության գործունեության որոշակի ակտիվացումը, որը հանգեցրեց երկրի ղեկավար Շեւարդնաձեի հրաժարականի դիմումի ստորագրմանը, ամենայն հավանականությամբ Ջաբա Իոսելիանիին ստիպում է վերանայել կաղերը երկրի ընդդիմադիր ուժերի հետ, որոնցից մի քանիսը դուրս չմնա Վրաստանի քաղաքական «Օլիմպոսից»:

Հենց այդ պատճառով այժմ, երբ վրաց-աբխազական հակամարտության գոտում իրադարձությունները թեւակոխել են վճռական փուլ, կրկին ասպարեզում է հայտնվել Ջաբա Իոսելիանին, իր «Մխեդրիոնի» կողմնակով: Խաղաղ մոռանալով այն մասին, որ ռուսական զորքերի աջակցությամբ հենց ինքն է իր կողմնակով զվիադականներից «մաքրել» Աբխազիային ստանձնակից Զուգդիդի շրջանը, Ջաբա Իոսելիանին այդ կողմերում կենտրոնացրել է «Մխեդրիոնի» մոտ 2 հազար գրոհայիններ: Հենց այդ զորաբաժինն է կազմակերպում Աբխազիայի Գալիի շրջան վերադարձող գաղթականների բազմի ձեռնարկումները: Աբխազիայի անվտանգության ծառայությունն արդեն հայտնել է այն մասին, որ «հենց այդ ռազմականացված խմբավորումից Աբխազիայի տարածքի Գալիի շրջան են ուղարկվում դիվերսիոն խմբեր»:

Այսպիսով, Կոդորի կիրճում տեղի ունեցող դեպքերը եւ հարյուրավոր գաղթականների Աբխազիա վերադառնալու խնդիրները հուժկու խթան հանդիսացան: որ ընդդիմության կողմից քաղաքական ասպարեզ վերադառնա անհայտ քանդակագործ, բայց շատ հայտնի քաղաքական գործիչ Ջաբա Իոսելիանին:

Հիրավի կենտրոնակ է քաղաքական գործիչների այն տեսակը, որը վերադրում է բոլոր վարչակարգերն ու ժամանակները: Մեր իրականության մեջ եւս կարելի է գտնել նման «ղեկավարների»:

ՌՈԶԱ ԳԱԲԲԵԵՎԱ,
Պատմագիտության թեկնածու

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վրաստան. Իրադրությունը Կոդորի կիրճում եւ դրա շուրջը

ներ: Հենց դրա դեմ է բողոքում Ջաբա Իոսելիանին, խոստանալով «անհապաղ այնտեղ մեկնել ռազմական գործողություններին մասնակցելու համար»:

Կոդորի կիրճի խնդիրը հակամարտության գոտի ռուսական խաղաղարար ուժեր մտցվելու պահից ի վեր ամենաբարդ խնդիրներից մեկն է: Վրացական կողմի պնդման համաձայն, այդ կիրճում գտնվում են 200 զինված աբխազներ: Ըստ էության, հենց այդ հանգամանքի պատճառով է, որ վրացական կազմավորումները մինչեւ օրս դուրս չեն բերվել կիրճից:

Բանակցությունների մի քանի փուլերից հետո առաջվեց, որ այդ վայրում տեղաբաշխված վրացական ռազմական տեխնիկայի չլիով դուրսբերումից կամ ոչնչացումից հետո, աբխազական կազմավորումները նույնպես կհեռանան կիրճի տարածքից, որտեղ կմնան միայն Ռուսաստանի խաղաղարար զորքեր: Այդ մասին հայտարարեց վրաց-աբխազական հակամարտության գոտում տեղաբաշխված ռուսական խաղաղարար ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Յակուշեւը:

Վրացական կողմը պահանջում է, որ դուրս բերվող տեխնիկան ոչ թե ոչնչացվի, այլ հանձնվի Կոդորի կիրճից ոչ հեռու գտնվող վրացական բանակի հատվածներին:

Մի խոսքով, առկա է քաղաքական առեւտուր, որտեղ Ջաբա Իոսելիանին իր «Մխեդրիոնի» կողմնակով կատարում է առաջին ջութակի դերը:

Փրկարարների «Մխեդրիոնի» կողմը ստեղծվել է 1989 թ. օգոստոսին: Թբիլիսիի 1989 թ. ապրիլի 9-ի ողբերգական դեպքերը Ջաբա Իոսելիանիին հանգեցրին այն հետեւության, որ հարկավոր է զինված կազմավորումներ ստեղծել ազգի պաշտպանության համար: 1989 թ. ամռանը Մառնեուլի շրջանում վրացիների եւ ադրբեջանցիների հարաբերությունները հիշ էր մնացել հասցնեին արյունահեղության (Մառնեուլում բռնաբարվել էին վրացուհիներ):

Դրանից հետո Մառնեուլի դեղեհրին մասնակցած մոտ 30 մարդ հավաքվեցին Թբիլիսիի «Դինամո» մարզադաշտում եւ իրենց անվանեցին «Մխեդրիոնի» ջոկատ: Հրամանատար դարձավ Ջաբա Իոսելիանին: Նա անմիջապես հռչակեց «Մխեդրիոնիի» քաղաքական նպատակները. «Մենք չենք ենթարկվում քաղաքական որեւէ ուժի եւ պետական կառույցի, այլ ծառայում ենք ազգի շահերին: Մենք ազգամիջյան հակամարտություններին կմասնակցենք խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար»: Եւ իրոք, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի սկզբնական պատերազմների սկզբնական շրջանում «Մխեդրոնիի» անդամներն ազնվորեն կատարում էին իրենց պարտականությունները:

Ըստ երեւույթին, Ջաբա Իոսելիանին ուզում է հենց այդ սկզբունքներն վերածնել «Մխեդրիոնի» կողմից իր գործունեության մեջ: Այսինքն, լինելով Վրաստանի խորհրդարանում վրաց-աբխազական հակամարտության կարգավորման հանձնաժողովի նախագահը, Ջաբա Իոսելիանին ցանում էր, որ անողայման ստեղծվի Էդուարդ Շեւարդնաձեի խաղաղասիրության հակակշիռը: Այն բանից հետո, երբ Ջաբա Իոսելիանին նշանակվեց Ժնեւում աբխազական կողմի հետ վարվող բանակցություններում Վրաստանի պատվիրակության ղեկավար, նա իր պարտականությունները, փաստորեն, չկարողացավ կատարել իր անցիջոնականության պատճառով: Այդ ամենից հետո վրաց-աբխազական հակամարտության կարգավորման փաստաթղթի տակ դրված չէ Իոսելիանիի ստորագրությունը:

Այժմ, երբ Աբխազիայի հակամարտության կարգավորումը կարեւոր փուլ է թեւակոխել, Ջաբա Իոսելիանին կրկին «Օլիմպոսում» է եւ դարձյալ ազգի պաշտպանի դերում: Իրականում «Մխեդրիոնի» կողմը չտանի այնպիսի դեր, որ ուզում է նշել Ջաբա Իոսելիանին:

1992 թ. հունիսին Վրաստանի նախարարների կաբինետը հաստատեց Ջաբա Իոսելիանիի գլխավորած փրկարարների կառույցի կանոնադրությունը: 1992 թ. աշնանից կառույցը մտավ վրացական բանակի կազմի մեջ: «Մխեդրիոնի» կառույցի հիմնական պարտականությունները են տարերային եւ բնական աղետների, արդյունաբերական եւ այլ վթարների, խոշոր հրդեհների դեղում փրկարարական աշխատանքների կազմակերպումը, բնակչության տեղային դուրսբերման աղահովումը եւ այլն: Ամեն ինչից երեւում է, որ «Մխեդրիոնի» հրամանատար Ջաբա Իոսելիանին չի ուզում կորցնել իր կաղերը ոչ ընդդիմության, ոչ էլ Էդուարդ Շեւարդնաձեի կառավարող վարչակարգի հետ: Եւ երբ այս տարվա մայիսին «անկախության» զորահանդեսում «Մխեդրիոնին» դարձավ վրացական բանակի կորիզը, ապա այժմ «Մխեդրիոնին» հիմնականում զբաղվում է գաղթականների Աբխազիա վերադառնալու հարցերով: Սակայն, այժմ տեղի է ունենում հենց այն «քաղաքական առեւտուրը», որի մասին խոսվեց վերեւում:

Վրաստանի ընդդիմության գործունեության որոշակի ակտիվացումը, որը հանգեցրեց երկրի ղեկավար Շեւարդնաձեի հրաժարականի դիմումի ստորագրմանը, ամենայն հավանականությամբ Ջաբա Իոսելիանիին ստիպում է վերանայել կաղերը երկրի ընդդիմադիր ուժերի հետ, որոնցից մի քանիսը դուրս չմնա Վրաստանի քաղաքական «Օլիմպոսից»:

Հենց այդ պատճառով այժմ, երբ վրաց-աբխազական հակամարտության գոտում իրադարձությունները թեւակոխել են վճռական փուլ, կրկին ասպարեզում է հայտնվել Ջաբա Իոսելիանին, իր «Մխեդրիոնի» կողմնակով: Խաղաղ մոռանալով այն մասին, որ ռուսական զորքերի աջակցությամբ հենց ինքն է իր կողմնակով զվիադականներից «մաքրել» Աբխազիային ստանձնակից Զուգդիդի շրջանը, Ջաբա Իոսելիանին այդ կողմերում կենտրոնացրել է «Մխեդրիոնի» մոտ 2 հազար գրոհայիններ: Հենց այդ զորաբաժինն է կազմակերպում Աբխազիայի Գալիի շրջան վերադարձող գաղթականների բազմի ձեռնարկումները: Աբխազիայի անվտանգության ծառայությունն արդեն հայտնել է այն մասին, որ «հենց այդ ռազմականացված խմբավորումից Աբխազիայի տարածքի Գալիի շրջան են ուղարկվում դիվերսիոն խմբեր»:

Այսպիսով, Կոդորի կիրճում տեղի ունեցող դեպքերը եւ հարյուրավոր գաղթականների Աբխազիա վերադառնալու խնդիրները հուժկու խթան հանդիսացան: որ ընդդիմության կողմից քաղաքական ասպարեզ վերադառնա անհայտ քանդակագործ, բայց շատ հայտնի քաղաքական գործիչ Ջաբա Իոսելիանին:

Հիրավի կենտրոնակ է քաղաքական գործիչների այն տեսակը, որը վերադրում է բոլոր վարչակարգերն ու ժամանակները: Մեր իրականության մեջ եւս կարելի է գտնել նման «ղեկավարների»:

ՌՈԶԱ ԳԱԲԲԵԵՎԱ,
Պատմագիտության թեկնածու

ՀԱՄԱՌՈՏ

Ադրբեջանի խորհրդարանը սկսեց դարի պայմանագրի քննարկումը

ԲԱՔՈՒ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍ: Ադրբեջանի խորհրդարանը սկսեց քննարկել կասպից ծովի ավազանի նավթահորերի շահագործման շուրջ Միջազգային նավթային կոնսորցիումի հետ կնքված պայմանագիրը: Խորհրդարանականները նպատակահարմար են գտել առավել մանրամասնորեն ծանոթանալ Կասպից ծովի կարգավիճակի շուրջ ստորագրված միջոցեսական պայմանագրերին եւ ստորագրված համաձայնագրի նկատմամբ Ռուսաստանի ունեցած դիրքորոշմանը: Հիշեցնենք, որ ՈԴ ԱԳՆ-ն ստորագրված պայմանագիրը համարել էր Կասպից ծովի առափնյա մյուս պետությունների շահերի կոպիտ ոտնահարում: Այդ երկրներն, ի դեպ, հոկտեմբերի 11-ին Մոսկվայում սկսեցին բանակցությունները Կասպից ծովի բնական պաշարների օգտագործման հարցում համագործակցության շուրջ:

Ռուսական նավթի արտահանումն այս տարի կմեծանա 7,5 մլն. տոննայով

ՍՈՉԻ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ, ՈՒՊ: Օպերատիվ հարցերով Ռուսաստանի կառավարության հանձնաժողովն այսօր համաձայնվեց էկոնոմիկայի նախարարության առաջարկության հետ մեծացնելու հեռավոր արտասահման նավթի արտահանման խվոտաները մինչեւ 7,5 մլն. տոննա: Միաժամանակ նավթի մատակարարումը ԱՊՀ երկրներին կկրճատվի 5,9 մլն տոննայով: Պլանավորվում է նաեւ 1,2 մլն. տոննայով կրճատել նավթամթերքների մատակարարումը ռուս սպառողներին անհրաժեշտ պահանջարկի բացակայության պատճառով: Նախարարության կանխատեսումների համաձայն, մինչեւ 1994 թ. վերջը Ռուսաստանում կարդյունահանվի 313 մլն. տոննա նավթ: Ներկայումս, նախարարության տվյալներով, ստացվում է 236 մլն. տոննա:

Ջոհար Դուդաեւը պատշտոնանկ կարվի՞

Չեչնիայի ժամանակավոր խորհրդի տեղեկատվական կոմիտեի ղեկավար Լ. Մահոմադովը հոկտեմբերի 12-ին ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ին հայտարարել է, թե ինքը չի բացառում, որ մոտ օրերս ընդդիմությունը ակտիվ քայլեր կձեռնարկի Ջոհար Դուդաեւի վարչակարգն ուժով տապալելու ուղղությամբ: «Ջոհար Դուդաեւը մոտ ժամանակներս պատշտոնանկ կարվի», ասել է նա, ընդսմին նշելով, որ դա տեղի կունենա առանց Ռուսաստանի զինվորական ստորաբաժանումների մասնակցության:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԼՈՆԴՈՆ

Անգլիայի թագուհին պատրաստվում է այցելել Ռուսաստան

ԼՈՆԴՈՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծ Բրիտանիայի թագուհի Էլիզաբեթ երկրորդը եւ նրա ամուսինը Էդինբուրգի դուքսը, անհամբերությամբ սպասում են նոյեմբեր Մոսկվա եւ Սանկտ Պետերբուրգ կատարելիք իրենց պետական այցին: Ռուսաստանում բրիտանացի միապետի առաջին այցը քաղաքական վիթխարի կարեւորություն ունի մեր երկրների հարաբերությունների համար, երեքշաբթի օրը Անգլիայի ԱԳՆ-ում հայտարարեցին Բուկինգեմի պալատի եւ Անգլիայի արտաքին գործոց եւ համագործակցության գործերի նախարարությունների ներկայացուցիչները:

ՄՈՍԿՎԱ

ԱՊՀ ռուսական համայնքներն ուզում են կրճատել արտագաղթը

ՄՈՍԿՎԱ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ, ԻՏԱՐ-ՊՐԵՍ: ԱՊՀ երկրներում կենցաղային ազգայնականությունը թուլանում է, երեկ նշվեց գիտագործնական այն խորհրդաժողովում, որը նվիրված է մերձավոր արտասահմանի ռուսալեզու բնակչության խնդիրներին: Ռուսական համայնքների ներկայացուցիչների կարծիքով, Ռուսաստանը ոչեմ է նպաստի ԱՊՀ-ից տարագիրների հոսքի կրճատմանը, այլապես դա կթուլացնի Մոսկվայի դիրքերն այդ երկրներում: Բացի դրանից ԱՊՀ երկրների ղեկավարները խնդրեցին օգնել պահպանելու ռուսաց լեզուն եւ մշակույթը: Ռուսաստանի նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովի նախագահ Արդալիոն Միկիտաեւը կողմնակից է կրկնակի քաղաքացիությանը վերաբերող երկկողմ համաձայնագրերի կնքմանը: Առայժմ նման պայմանագիր ստորագրված է միայն Թուրքմենստանի հետ: Թերեւս այդ ցանկը շարունակի Գերմանիան:

Գաղթի դաշնակցային ծառայությունը Դաշնության խորհուրդ օրինագիծ է ուղարկել տեղահանվածների մասին Ռուսաստանի օրենքում փոփոխությունների ու լրացումների կատարման վերաբերյալ: Նախատեսվում է համապատասխան կարգավիճակի հաստատման համար միջոցառությունների ներկայացման պարտադիր տասնօրյա ժամկետ, բոլոր գաղթականների պարտադիր բուժսուրգում եւ նրանց համար հատուկ բնակարանային ֆոնդի ստեղծում: Առաջարկվում է Գաղթի դաշնակցային ծառայությանը եւ դրա տարածքային մարմիններին բույլատրել դադարեցնելու բնակարանների հատկացումը այն ընտանիքներին, որոնք առանց բավարար պատճառների հրաժարվում են առաջարկված երկու բնակավայրերից: Փաստաթղթում նախատեսվում է հողված տեղահանվածին կարգավիճակից զրկելու մասին:

Ռուսաստանի նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովի տվյալների համաձայն, 1992 թ. փետրվարից մինչեւ 1994 թ. սեպտեմբեր Ռուսաստանի քաղաքացիություն են ստացել մերձավոր արտասահմանի 137197 եւ հեռավոր արտասահմանի 21308 բնակիչներ: Այս ցանկում առաջատարներն են Լատվիան (35947), Էստոնիան (23491) եւ Կիրգիզիան (21947), ցանկը եզրափակում է Բելառուսը (66): Նեղգաղթականների 80 տոկոսը ռուսներ են:

Գաղթի դաշնակցային ծառայության տեղեկություններն համաձայն, 1994 թ. առաջին կիսամյակում հեռավոր արտասահմանում մշտական բնակության մեկնելու թույլտվություն են ստացել 54674 ռուսաստանցիներ (1,15 անգամ ավելի, քան անցյալ տարվա նույն ժամանակամիջոցում): Մեկնողների 95 տոկոսը ընտրել է Գերմանիան, Իսրայելը, ԱՄՆ-ը: Նրանց մեջ գերիշխում են Օմսկի մարզի, Ալթայի երկրամասի, Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի բնակիչները: Նրանց 40 տոկոսը գերմանացիներ են, ավելի քան 20 տոկոսը՝ ռուսներ, 15 տոկոսը՝ հրեաներ: Միաժամանակ ծառայությունը մտահոգված է անօրինական ներգաղթյալների աճից, որոնք ներկայումս Ռուսաստանում մոտ 500 հազար են: Ծառայության փորձագետների կարծիքով, այնուհանդերձ, ինչպիսի դեպքերներ, ինչպիսիք են Շրի Լանկան, Սոմալին, Վիետնամը, գիտակցաբար վտարում են բնակչության արտահոսքը խթանող քաղաքականություն:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Բուրսայական ճգնաժամ

Առեւտրային բանկերի կողմից վերլուսային խոշոր ոչնչացման հիմնական դատաստան է: Հոկտեմբերի 12-ին Բիզնես-ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում այս մասին հայտարարել է Ռուսաստանի Դաշնության Ֆինանսների նախարարի դատաստանական Ս. Դուբինինը: Նրա կարծիքով, Ռուսաստանի վերլուսային շուկայում առաջացած ներկայիս ճգնաժամային իրադրությունը ոչ թե արժեթղթերի աճի բարձր տեմպերի արտացոլումն է, այլ սովորական բորսայական ճգնաժամ է, եւ որեւիցե ապրանքի, տվյալ դեպքում ամերիկյան դոլարի արհեստականորեն բարձրացման դատապարտելի առաջացնում է նրա անբնական բարձր գին: Ռուսաստանում, ասել է Ս. Դուբինինը, այս բորսայական ճգնաժամը այնքան սուր ձեւ է ընդունել, որ դրա վերացումն ըստ երեւույթին տեղի չի ունենա առանց բացասական հետեւանքների:

Ս. Դուբինինը հայտարարել է, որ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկը հոկտեմբերի 12-ից կսկսի ավելի ակտիվ մասնակցություն ունենալ Մոսկվայի միջբանկային վալյուտային բորսայի աճուրդներին, ինչը, ինչպես տպավորվում է, կնոպասի բորսայական ճգնաժամի հաղթահարմանը: ՍՐՍԵՆՊՐԵՍ

ԲԱՔՈՒ

Ադրբեջանցիներին ռուսական թերթեր եւ հանդեսներ

ԲԱՔՈՒ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ ԻՏԱՐ-ՊՐԵՍ: Ադրբեջանի քաղաքացիներն այսուհետեւ կկարողանան ազատորեն ստանալ ռուսական թերթեր ու հանդեսներ, ճիշտ է, ոչ խորհրդային ժամանակների առատությամբ, հաղորդում է «Խաբար սերվիս» գործակալությունը: «Իզվեստիայի», «Ռաբոչայա տրիբունայի» եւ «Տրուդի» բաժանորդագրությունը կատարվում է ազգային փողով՝ մանաթով, մյուս հրատարակություններինը՝ ռուբլով: Բոլոր պարբերականներն այժմ առաքվում են Մոսկվայից (նախկինում, ինչպես հայտնի է, դրանք տպագրվում էին Բաքվում):

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սեյրան Բաղդասարյան. «Ռուսաստանը բարոյական պարտք ունի Ղարաբաղի նկատմամբ»

Ինչպես հայտնի է, անգլիական խորհրդարանի պատվիրակության ղեկավար լորդ Ռիչարդ Շենոնը հոկտեմբերի սկզբներին Ստեփանակերտում հանդես եկավ սենսացիոն մի հայտարարությամբ, ըստ որի նավթամուղն անկախություն կտա Ղարաբաղին, եթե անցնի ԼՂՀ տարածքով: Լորդ Շենոնի խորին համոզմամբ նավթամուղի երթուղիներից ամենախոհեմն Ադրբեջան-Ղարաբաղ-Հայաստան-Թուրքիա տարբերակն է, քանի որ այն բխում է ինչպես հակամարտող կողմերի, այնպես էլ շահագրգիռ բոլոր երկրների շահերից: Միանգամայն ակնհայտ է, որ նման հայտարարություններ պատահական բնույթ չեն կրում եւ հարգարժան լորդն, ամենայն հավանականությամբ, առաջադրանք էր ստացել ստուգել հայերի արձագանքը նավթամուղի հիշյալ տարբերակի վերաբերյալ: Այս կապակցությամբ Ստեփանակերտում մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը դիմեց ՀՀ Գեր Արցախի հարցերով հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանին, որն ուղեկցում էր անգլիացիներին Ստեփանակերտ, խնդրելով մեկնաբանել նավթամուղի կառուցմանն առնչվող մի շարք հարցերի:

-Վերջերս տարբեր երկրների քաղաքական գործիչներ, ինչպես նաեւ լրատվության որոշ ազդեցիկ միջոցներ բավականին ակտիվորեն քննարկում են ադրբեջանական նավթի ճակատագրի եւ նոր նավթամուղի կառուցմանն առնչվող հարցերը: Ի՞նչ կարծիքի եք կարտայտվելիք նավթամուղի երթուղու հնարավոր չորս տարբերակների մասին եւ դրանցից ո՞րն է ըստ ձեզ համապատասխանում մեր շահերին:

